



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեոնազործների 18, հեռ. (+374 285) 3 31 31, էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեոնազործների 18,

Հեռ. (+374 285) 3 31 31,

Էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

Հաշվետվություն թիվ 07, 08.04.2021թ.

«DataLex» դատական տեղեկատվական համակարգի համաձայն՝

- 1) «Զանգեզուր Մայնինգ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության 14.08.2019թ. կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշումը, դրանով հաստատված բաժնետիրական համաձայնագիրը, 14.10.2019թ. կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշումը և դրա հիման վրա 16.10.2019թ. և 16.12.2019թ. կնքված պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջով՝ որպես պատասխանող նշելով նաև «ԶՄՊԿ» ՓԲ ընկերությանը:
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2021թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:
- 2) «Զանգեզուր Մայնինգ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության 06.11.2020թ. կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու, նշված որոշման հիման վրա կնքման ենթակա պայմանագրերի կնքումն արգելելու պահանջով՝ որպես պատասխանող նշելով նաև «ԶՄՊԿ» ՓԲ ընկերությանը:
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2021թ. որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ: